Է. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 3 ՅՈՒԼԻՍ 1904 — ԹԻՒ 632

ՇԱՐԺՈՒՄ

ԻՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀԱՆԻ ՏՊԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՀԱՅԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ.

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 տլր.
Վեցամսեայ 1.50 »

Ուսանողական տարբեր ձևերի համար 40 սանթիմ. Ամենուրեք տարբերակ 20 սանթիմ. Ամենուրեք 20 սանթիմ. Ամենուրեք 20 սանթիմ. Ամենուրեք

գաղափարներուն իրականացման համար ոչ եւ է ճիգ մը կամ զոհողութիւն մը պահանջես, իսկոյն հեռու կը փախչին, հազար տեսակ պատճառաբանութեանց ետին ինքզինքին պարտկել ջանալով։ Արծրունի այդ պիսի-ՆԵՐԸ անպէտ, թշուառ անպարտաճանաչ կանուանէ։

Այս յարձակումները բնականաբար պիտի կատղեցնէին հայ երիտասարդ «էնտէլիկէնցիան», որ սկսաւ Արծրունին ազգին թշնամի հռչակել, պատճառաբանելով որ անիկա ազգին է՛ն կենսական ուժը, երիտասարդութիւնը, կը ջլատէր իր հարուածներով։

Այս տրտունջները փոխանակ Արծրունին վհատեցնելու, առիթ տուին որ շարք մը հեգնական յօդուածներով ա՛լ աւելի ուժգնէ իր հարուածները։ «Մշակ ի 30 Թուին մէջ գեղեցիկ յօդուած մը գրեց «Լսել են թէ Ալին մեռել է, բայց չեն իմացել ո՛ր Ալին» վերնագրով։ Մեր այդ դժգոհ «Ինտէլիկէնցիան» իմացեր էր որ ամէն երկրի մէջ երիտասարդութիւնը կը կազմէ ազգին մտաւոր, բարոյական ու ֆիզիքական ուժը, որովհետեւ կեանքի այդ շրջանը միայն կեռայ ամէն ցանկութիւններով։ Բայց ո՞ր երիտասարդութիւնը ատիկա չէին հասկեր։ Ոչ ապաքէն տարիքով երիտասարդ իսկ հոգիով ծեր շատ մարդիկ կան այսօր։ Այն երիտասարդութիւնն է ազգին ճշմարիտ ուժը, որ գիտէ, ըմբռնած է թէ իրեն տրուած բնական արտօնութեանց հետ կազմուած են անձնական պարտականութիւններ. աշխատանք, կամեցողութիւն, նկարագիր, հետեւողական ոգի։ Այն երիտասարդութիւնն է ազգին ճշմարիտ ուժը, որ գիտէ իր հոգին միշտ հեռու պահել ամէն լուսաւոր երեւոյթի մէջ սեւ նախանձ, աղտոտ էնդրիկ, կայր ատելութիւն խառնելէ, որ ինքնահաւան, դատարկախօս, անպտուղ չէ, և որ չահու հաւար չի դաւաճաներ իր պաշտամունքներուն, իր իդէալներուն։

Այսպէս խիստ յարձակումի դեռ չէր տեսնուած երիտասարդութեան դէմ։ Բայց Արծրունի պէտք էր որ արձակէր իր սլաքները։

Ռ.

(Շարունակելի)

ԹՈՔԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Հին կատակերգութիւնն է որ կը վերսկսինք։ Սուլթանը, բնականաբար, ամենագլխաւոր դերակատարն է, որ իր խեղկատակ ու անճարկած շարժուձեւերով կը զուարճացնէ քաղաքական աշխարհը։ Պասունի յանկարծական ու անսպասելի հերոսամարտէն խելակորոյս կրկին իր մօլլայական գլխուն ամբողջ մաշած, ծակծկած հնարամտութիւնները մէջտեղ կը բերէ խաբելու, ստելու, կեղծելու համար։ Նախ պապ չիշանները և ընծաներու տոպրակն է որ կը բացուի, թագակիր պետերը սիրաշահելու և քաղաքական անձնաւորութեանց տրամադրութիւնները շարժելու համար, միւնոյն ատեն յիմարու ենթադրեալ էնսինիւսասիոնները հրապարակ կուգան հակառակորդները վարկաբեկելու և Եւրոպայի աչքէն ձգելու համար։

Բայց կերեւայ թէ մօլլային հաշիւները այս անգամ ջաւազի վրայ գրուած էին։ Ուստի շուտ յեղաշրջուեցան։ Ի՞նչ սքանչելի առիթ եկած կը խորհէր Սրլուքզի ոդորմելի բանտարկեալը Պասունը բնաջինջ ընելու և Հայաստանի մէջ երկրորդ Բարթուղիմէոսեան գիշեր մը պատրաստելու համար։ Հազիւ Մակեդոնիոյ սարսափներէն գլուխը հանդարտած կը կարծէր և հայկական նախճիրները երեւակայելով կուշտ կուշտ փորէն կը խնդար։ երբ դէմը գտաւ Դաշնակցութեան հզօր Անդրանիկը, որ Պասունցի քաջերուն հետ մօսինները որոտացնելով ժայռերը ցնդեց և Սրլուքզի չարաշուք դահիճին խրդալը փորը թողուց։ Եւրոպայուզուեցաւ հայ մօսինները որոտումէն, պաշտպան հանդիսացաւ։ Իսկ դահիճը, շուարած, փորը չիրեց, մօրուքը շոյեց, Կիլիս ադրարիկին չորս կողմը սլքտկաց։ Բայց անօգուտ, ամէնքն ալ անտարբեր էին։ Իր միակ ապաւէնը, հիւսիսի արջը, գազաններու գազանը, անհրեւակայելի փորձանքի մը հանդիպած՝ գլուխը կորանցուցեր է ու իր փոսիկը խալսելը կը հոգար միայն, ակռաները կճրտացնելով հայերուն դէմ՝ որոնք լայն լայն քիթին կը խնդային։ Փրփուրները կը յոդային բերանին մէջ, գազանային ոռնոցներով ոդը կը թնդար։ բայց խեղճին քիթէն երկաթէ օղակ մը անցած էր։

Սուլթան Համիտը ամէն կողմէ յոյսը կտրած, իր սիրական քիւրտերուն դիմեց նորէն։ Եւրոպայի սպառնալիքներուն առջեւ, նեղը մնալով սկսաւ աղաչել։ «Կը ջարդեմ հա՞»։ Վերջին հեռագիրը զոր թրքական աղբիւրները հաղորդեցին, ատիկա չէ՞ր պացուցանէր։ Այդ հեռագիրը կ՚ըսեր որ, եթէ հայերու մասին եւրոպացիք պնդեն, քիւրտերը պիտի կատղին և կրնայ բլլալ որ ջարդը սկսի։ Ապուշը՝ ճիշտ թրքական տրամաբանութիւն։ Որովհետեւ քիւրտերը կը կատղին, ուրեմն հայերը միշտ դատապարտուած բլլալու են ստրկական կեանք վարելու։

Սրլուքզի ցաւագարը զգացած է, սակայն, հին երանելի օրերուն անդառնալիօրէն անցնիլը։ Արդէ՞ն խորտակուած՝ երկրորդական ալիքէ ունի. անգլիական, ֆրանսական, իտալական ազատամիտ երկիրներու հզօր ձայնը սպառնական ու շանթալից, իր բոլոր ուժգնութեանը մէջ կը սասանեցնէ Կարմիր Սուլթանը։ Արդարութիւնը պէտք էր որ վերջի՛ վերջո՝ իր հզօր վճիռը տար անմիտ ոճրագործներու քրմահաճոյքին դէմ։ Առանց այդ յոյսին՝ կեանքը շատ դառն պիտի բլլար իսկապէս։

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ՖԻԼԻՊԷԻ ՀԱՅ ՄԱՍՆԱՒՈՐ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Հանդէսը՝ որ տեղի ունեցաւ օրս սոյս Շէին. կիրակի առաւօտ Կիմ-

ԽՊՂՃԻ ԵԿԷՔ

(Այս վերնագրով Տօլստոյը տասներկու յօդուած է գրել «Տայմզի մէջ», որոնց վերջինի հետ աւելորդ չենք համարում ծանօթացնել «Շարժումի» ընթերցողներին, թարգմանելով բուլգարերէնից։)

Հէնց նոր էի ուզարկել պատերազմի մասին գրածս յօդուածի վերջին թերթիկները երբ սարսափելի լուրը հասաւ։ Նոր չարագործութեան որ հասցնում են ռուս ժողովրդին թեթեւամիտ ու իշխանութիւնով կուրացած մարդիկ, որոնք իրացել են ժողովրդին իրենց ուզածի պէս վարելու իրաւունքը։

Նոյն ծաղրածուական զգեստներով զարդարված ստրուկների ստրկահոգի ստրուկները, զանազան տեսակի գեներալներ, ցանկալով հռչակվել, իրար կրծել, կամ թէ իրաւունք ստանալ իրենց ծաղրածուական զգեստներին փակցնել մի նոր աստղ կամ գուլակ, ժապաւէն եւ կամ յիմարութիւնից ու անշնորքութիւնից դրդված, միշտ նոյն չնչին ու եղկելի մարդիկը ոչնչացրել են սարսափելի տաճիանքների մէջ. մի քանի հազար մարդկանց, որոնք հէնց այդ ոչնչացողներին են կերակրում։ Եւ միշտ այդ չարագործութիւնը ոչ միայն չէ ստիպում պատճառ եղողներին զղջալ ու խոկալ, այլ ընդհակառակը չարունակ լսում ենք եւ կարդում թէ՝ ինչպէս եւ աւելի ա՛

բազութեամբ պէտք է սպաննենք եւ հաշմանդամենք շատ մարդկանց, խորտակենք շատ ռուս եւ ճարոնական ընտանիքներ։

Բայց այդ դեռ բաւական չէ. այդ ոճրագործները, որպէսզի մարդկանց պատրաստեն նոյնանման չարագործութիւններ անելու համար, ոչ միայն չեն խոստովանում այն ինչ որ ամենքի համար պարզ եւ հէնց իրենց ազգասիրական եւ պատերազմական տեսակէտով ամօթալի պարտութիւն, այլեւ ճիգեր են թափում հաւատացնել դիւրահաւատ մարդկանց, թէ նրանք—ռուս դժբախտ աշխատաւոր ժողովուրդը, իբրեւ անասուններ սպատղանոց տարված եւ մի քանի հազարներ արդէն սպանված ու հաշմանդամ եղած որովհետեւ այսինչ գեներալը չէ հասկացել միւս գեներալի առածը—հերոսութիւններ են գործել նրանով—որ փախչել չը կարողացողները սպանվել են, իսկ փախչողները կենդանի են մնացել։

Հապա այն, որ այդ սարսափելի խստասիրտ, անբարոյական մարդկանցից, որոնք գեներալ ու ադմիրալ տիտղոսներով են մեծարվում, մէկի բպմամիւ խաղաղ ճարոնցիներին խեղդելը փառաբանվում է իբրեւ մեծ սխրագործութիւն, որ ամեն մի ռուսի պէտք է ուրախացնէ։ Ու լսելոր թերթերում տպվում են կոչեր դէպի սպանութիւն — «Թող Եալուի մօտ սպանված երկու հազար ռուս զինուորները. վնասված Ռէտվիզանը,

նրա ընկերները եւ մեր ոչնչացած ականակիրները մեր զրահաւորներին սովորեցնեն թէ՝ ինչ ուժգնութեամբ պէտք է յարձակվել վատ ճապոնիայի ափերի վրա։ Ճապոնիան իր կօրքը ղրկից ռուսի արիւն թափելու համար եւ պէտք չէ որ մենք նրան գթանք։ Պէտք է կրուենք, պէտք է այնպիսի ծանր հարուածներ տանք, որոնց յիշատակը միայն պէտք է սատեցնէ ճապոնացիներին սրտերը։ Հիմա ժամանակն է որ մեր զրահաւորները բաց ծով դուրս գան ու իբր սարսափելի դժբախտութիւն անցնելով նրա գեղեցիկ եղերներով ճապոնական քաղաքները մոխրի վերածեն։

Բաւ է փափկասիրտ լինելը։

Ու սոյսված սարսափելի գործը չարունակվում է. չարունակվում են եւ թալանները, կողութիւնները, սպանութիւնները, մանաւանդ սարսափելի սուտը, կատարվող դաւանանքների անունով՝ ինչպէս քրիստոնէութեան, այնպէս եւ բուդայականութեան։

Ցարը՝ գլխաւոր պատասխանատուն, չարունակում է զօրահանգէներ սարքել, շնորհակալութիւններ յայտնել, շնորհներ բաշխել, քաջալերել եւ պահեստի զինուորներին զէնքի կոչելու հրովարտակներ հանել։

Հաւատարիմ հպատակները կրկին եւ կրկին նետում են իրենց հարստութիւնը եւ կեանքը իրենց պաշտելի վեհապետի ոտքերի տակ, բայց խօսքով միայն. իսկ նրանք, որոնք

ուզում են գործով տարբերվել ուրիշներից, խլում են որբացած ընտանիքների հայրերին նրանց պատրաստելով սպանդանոց դրկելու համար։

Հրապարակախօսները, որչափ ռուսների վիճակը վատ է լինում՝ այնքան էլ անամօթաբար ստում են, ամօթալի պարտութիւնները յաղթութեան վերածելով. համոզված լինելով որ հերքող չի գտնվի ու հանգստութեամբ հաւաքում իրենց բաժնեգիները եւ ծախված թերթերի գրաւները։

Որչափ աւելի շատ դրամ եւ մարդկային աշխատութիւն է ծախսվում պատերազմի համար, այնչափ աւելի թալանում են գլխաւորները եւ ֆիներիստները համոզված, որ իրենց արածները հրապարակող չի լինի, որովհետեւ ամէնքն էլ թալանում են։

Զինուորականները՝ կրթված սպանութեան համար, տասնեակ տարիներ անցրած ամարդութեան, կողոպտութեան եւ դատարկութեան դրպրոցներում, ուրախանում են խեղճերը, որ բացի ոճիրները բարձրանալուց եւ բարձր պաշտօններ պէտք է բացվեն։ Քրիստոնեայ հովանաւորները՝ չարունակում են ժողովրդին հրաւիրել դէպի ամենամեծ ոճրագործութիւնը, չարունակում են սրբապղծութիւնը, Աստուծուց խնդրելով օգնել իրենց պատերազմի մէջ, եւ ոչ միայն չեն դատապարտում, այլեւ գովում ու արդարացնում են այն հովին, որը խաչը ձեռքում մարդկանց, ոճիրի տեղում քաջալերում է

սենպուրկ թատրոնին մէջ, շատ խոր և սպեւորիչ տպաւորութիւն մը թողուց հոն փութացող խուռն բազմութեան վրայ։

Թատրոն մտնող հասարակութիւնը լոելեայն շատ բան կարնար զգալ արդէն իր շուրջը դիտելով

Բեմին գրեթէ ճակատը ալ ու ձախ զարդարուած էր Արամ Արամեանի, Պետրոս Սէրէմճեանի մեծադիր պատկերներով. քիչ մը վարը հայ վանքերու պատկերներով Բեմին կամարէն ներս ուրիշ գեղեցիկ կամար մը կը գոյացնէին Մայր-Հայաստանի իւղաներկ մեծ պատկերը իր շուրջը ունենալով հայկական եռագոյն երկու մեծ դրօշակներ, ինչպէս նաեւ Բաֆֆիի, Հայրիկի, Նալբանդեանի, Ահարոնեանի, Արծրունիի և ուրիշ շատ մը գրական և ազգային գործիչներու պատկերներ։ Իսկ բեմին խորը Ադրիա-Սերոբի մեծադիր պատկերը կը փայլէր շրջապատուած թարմ ծաղիկներով։

Հանդէսը բացուեցաւ «Մեր հայրենիքով», որ աչակերտներու կողմէ երգուեցաւ յատնաձայն, առաջնորդութեամբ Պ. Բօբոյի, և որ ոտքի վրայ կեցած ունկնդրեց հասարակութիւնը։

Աչակերտներու կողմէ արտասանուեցան վեց-եօթը հատ հայերէն ոտանաւորներ, հինգ-վեց՝ պուլկարերէն, որոնք սէնն ալ յայտնի էին։ Զէ կարիլի չի մատնանշել Հայ-Դուստրի «Մեկ գագաթ» —նուիրուած Սերոբ-Ազբիւրին— զոր յայտնի կերպով արտասանեց Պ. Գրիգոր Մանուկեան։ Հանդիսականներէն շատերը լացին, երբ արտասանող աչակերտը իր խօսքերը կուղղէր «Սերոբ-Չանտրին», որ հոն կեցած էր խրոխտ, բայց անխօս... Պ. Երուանդ Գրիգէսկլեան կարդաց բաւական ուժով կերպով Ղարիպի «Աչուզոր»։ Աչակերտներս պարբերաբար մարդասպանութեան մէջ։

Նոյնը կատարվում է եւ Ճապոնիայում։ Դեռ աւելի մեծ եռանդով, չնորհիւ իրենց յաղթութիւնների մոլորված ճաբոնացիները՝ Եւրոպայի ամենավատ օրինակին հետեւելով, թռչում են դէպի սպանութիւն։ Նրանք էլ են սարքում զօրահանդէսներ։ Միկադոն էլ է չնորհներ բաշխում։ Նոյնպէս փքվում են զանազան զօրավարներ։ Երեւակայելով թէ քաջ-քակրթված են, քանի որ սպանել գիտեն։

Այնտեղ էլ աշխատաւոր ժողովուրդը տնքում է, կտրվելով օգտակար աշխատութիւնից եւ ընտանիքից։ Այնտեղ էլ թերթ հրատարակողները հրվում են իրենց շանելովը, եւ նոյն պէս ի հարկէ (քանի որ ուր սպանութիւնը բարեմասնութիւն է համարվում, այնտեղ եւ բոլոր բարոյական ախտերն են ծաղկում) փող են դիզում բոլոր գլխաւորները եւ աֆերիստները։ Իսկ ճաբոնացի աստուածաբանները եւ կրօնուսոյցները, ինչպէս նրանց զինուորականները պատերազմական արուեստի մէջ։ Եւրոպացիներից ետ չեն մնում կրօնական կեղծիքի ու սրբապղծութեան արուեստի մէջ, եւ յեղաշրջում են բուդայական մեծ ուսուցումը, ոչ միայն չարգիլելով, այլեւ արդարացնելով Բուդայի կողմից արգիլված սպանութիւնը։

Բուդայականութեան գիտուն Սոէն Շակիին, 800 վանքերի պետը, բացատրում է որ թէեւ Բուդան արգիլել է սպանութիւնը, բայց եւ ասել է որ երբէք հանգիստ չը պէտք է լինի, մինչեւ որ բոլոր արարածները միացած մի անվերջ սիրող սիրտ չը կազմեն եւ այդ պատճառով էլ, որպէսզի հնար լինի անկարգ վիճակի մէջ գտնվող իրերը կարգաւորել պէտք է որ պատերազմ լինի, պէտք է որ մարդիկ սպանվեն։

Ու որպէս թէ երբէք գոյութիւն ունեցած չէ քրիստոնէութիւնը եւ բուդայականութիւնը, որոնք քարոզում են մարդկային միութեան, մարդկանց եղբայրութեան, դիմութեան և մարդկային կեանքի անմերձենալիութեան մասին։

Մարդիկ, թէ Ճապոնացիները և թէ Ռուսները, արդէն լուսաւորուած ճշմարտութեան լոյսով, վայրի գազանների նման դեռ աւելի չարութեամբ իրարու վրա են յարձակվում կարելի եղածին չափ շատ կեանքեր ոչնչացնելու միակ ցանկութեամբ։ Հազարաւոր զոբախտներ տքնում և հեծում են սարսափելի տանջանքներից ճաբոնական և ռուսական հիւանդանոցներում, ու կարծես մոլորած ինքզինքին հարցնում. թէ ի՞նչու իրենց դէմ այդ սարսափելի գործն է կատարվել. իսկ ուրիշ հազարաւորներ փտում են գետնի տակը և երեսին և կամ թէ լողում ծովի մէջ ուռած ու տրաքված, եւ տասնեակ հազարներով կիներ, հայրեր, մայրեր, երեխաներ սգում են խենդութեամբ կորած իրենց կերակրողներին։ Բայց այդ բոլորը դեռ քիչ է, ու դեռ նոր և նոր զոհեր են պատրաստում։ Հրամանատար մարդասպանների գլխաւոր հոգսն է որ ռուսների կողմից մի վայրկեան անգամ չը դադրի թնդանօթի բերանին գնացող մի հոսանքը —օրը երեք հազար հոգի— կոյստեան դատապարտվածներ։ Նոյնի մասին են հոգում և ճապոնացիները։ Նրանք անդադար գետն են հրում հետիոտներին որպէս զի իրենց շարքերը կարողանան առաջուց գնացող և իւղդը վոզների վրայովը անցնել։...

Էհ, երբ պէտք է վերջանայ այս։ Եւ երբ վերջապէս պէտք է ուշքի գան խաբված մարդիկ և ասեն. «Էհ, դո՛ք գնացէ՛ք, դուք անխիղճ ցարեր, Միկադոներ, նախարարներ, Մետրապոլիտներ, վանահայրեր, գեներալներ, խմբագիրներ աֆերիստներ և ով գիտէ դեռ ինչեր, դուք գնացէք ռումբների և գնդակների տակ։ Իսկ մենք չենք ուզում և չը պէտք է գնանք։

Մեզ հանգիստ թողէք, որ վարենք, ցանենք, տներ շինենք եւ ձեզ ծրիակերներիդ կերակրենք։ «Որովհետեւ այժմ այդպէս անելը շատ բնական է, քանի որ մեզնում Ռուսաստանում լավում է հարիւր հազար մայրերի, կանանց, երեխաների լացը, որոնցից խլում են զիրենք կերակրողներին, պահեստի զինուորականներին։ Զէ որ այդ մարդիկը՝ պահեստի զինուորներից շատերը, գիտեն գրել եւ կարդալ, գիտեն թէ ինչ է ծայրագոյն արեւելքը, գիտեն թէ պատերազմը մղվում է ոչ թէ Ռուսիոյ անհրաժեշտ մի կարեւոր գործի համար, այլ մի օտար, վարձու, ինչպէս ասում են նրանք, հողի համար, որի վրա օգտակար է եղել երկաթուղի չինել, որ ինչ որ աֆէրիստներ իրենց գործերը կարգադրեն։ Դիտեն եւ կամ կարող են գիտնալ, որ զիրենք պէտք է կոտորեն ոչխարների պէս, սպանդանոցում, որովհետեւ ճապոնացիները ունեն սպանութեան վերջին կատարելագործութեան հասած գործիքներ, իսկ մենք չունենք, որովհետեւ ռուս իշխանութիւնը, որ իրանց մեռնելու է ուզարկում չէ մտածել ժամանակին ձեռք բերել այնտեսակ գործիքներ ինչ որ ճապոնացիները ունեն։ Այո, եթէ գիտենան չատ բնականօրէն պէտք է ասեն «գնացէք, դուք որ պատերազմի պէտքն էք զգում, նրա՛նք որոնք պատերազմը արդարացնում են. գնացէք ճապոնական գնդակների եւ ականների դէմ. իսկ մենք չենք գնայ, որովհետեւ ոչ միայն այդ պէտք չէ, այլեւ չենք կարողանում ըմբռնել թէ ինչու այդ ոեւ է մէկին պէտք պիտի լինիր։

Բայց ոչ. նրանք այդ չեն ասում. գնում են, եւ դեռ կը գնան ու չեն կարող չը գնալ քանի որ վախենում են նրանից, ինչ որ ոչնչացնում է մարմինը, այլ ոչ նրանից, որ ոչնչացնում է հոգին։

(Շարունակելի)

ԵՐԳԵՑԻՆ ԵՐԿՃԱՅՆ ԵՒ ԵՌԱՃԱՅՆ ԵՐԳԵՐ —Պէշիկթաշլեանի «Մէջ փող զարկինքը», Պ. Պիօնեանի գրած «Է՛յ ազիզ հայրենիքը», «Մայր Արարատ», «Կանանք արժէք ունի», եւ այլն, որոնց մէկ քանիին բառերն ալ տպուած ցրուեցան հասարակութեան։ Մանկապարտէզի սաները սիրուն և գեղեցիկ կերպով երգեցին «Ա՛յ մարդ», «Սիրուն թռչնակ», «Մարի լանջը», «Մայիս», «Սիրուն անմեղ», «Փայլուն արեւը», որոնց դաշնակով ընկերացան Օր. Օր. Զարուհի Գրիգէսկեան, Գեղեցիկ Պարտիկեան, Վարդանոյշ Զէքտիրեան։

Վարժարանին տնօրէն դասատու Պ. Կ. Պիօնեան բանախօսութիւն մը ըրաւ. վերջանեց կրթութեան անհրաժեշտութիւնը, վարժարաններու օգտակարութիւնը — ըլլան մասնաւոր թէ ազգային— երբ անոնք նպատակայարմար կրթութիւն մը կուտան, ազգային ոգին կ'արթնցնեն. ՄԱՐԴ կը պատրաստեն, հայ մարդ։ Տեղեկութիւններ տուաւ հայ մասնաւոր վարժարանի կարգ ու սարքին, մեթոտներու, աշակերտներու և ուսուցիչներու քանակին վրայ, ուրկէ տեսնուեցաւ որ վարժարանը ունի եօթը ուսուցիչ և ուսուցչուհի և 100ի չափ աշակերտ, կանոնաւոր մանկապարտէզ մը, որ Պուլկարիոյ ո՛չ մէկ քաղաքը ունի։ Բանի մը խօսքով յիշեց մեծամեծ զոհողութիւններով առաջ տարուած աս օգտակար գործին շուրջը եղած անմիտ քննադատութիւնները ի՞նչ տեսակ պէտք է որ ըլլան։

Բանախօսութենէն ետք աշակերտներու և աշակերտուհիներու կողմէ ներկայացուեցաւ հայ ներկայ իրականքէն առնուած երեք պատկերներ անապատելի յաջողութեամբ, որոնցմէ երկուքը պատրաստած էր Պ. Պիօնեան։

Առաջին պատկերին մէջ երկու հայ գեղեցիկ երիտասարդներ դիւղական աղջիկներ դիւղական աղջիկներ կը խօսակցէին հայ իրականութեան, հայ ֆէտայիներու քաջութեանց և արտասահմանի իրենց քոյրերու անտարբերութեան մասին։ Մխիթարեցին Մարթա մարիկը, որուն որդին ալ լեռ եւած էր։ Այս պատկերին մէջ ներկայացաւ նաեւ գիւղին պահապան Մստոյ աղան իր բոլոր գազանութեամբը։

Օր. Օր. Զարուհի Գրիգէսկեան և Գեղեցիկ Պարտիկեան (հայաստանցի գաղափարուած աղջիկներ), Օր. Վարդանոյշ Զէքտիրեան (Մարթա մարիկը), Պ. Հայկ Խաչերեան (Մստոյ աղան), Պ. Գր. Մանուկեան (գիւղացի), բոլորն ալ շատ յաջող էին։

Երկրորդ պատկերը հետեւողութիւնը մը էր զարիպի Պաղտոյին, որ ֆէտայիներուն հաց տարած տեղը ըսպաննուեցաւ Մստոյէն, վրայ հասան ֆէտայիները և Մստոյն չան սատակ ըրին։ Հոս ալ դերակատարները յաջող էին. մասնաւորապէս Եդուարդ Գրիգէսկլեան իր խմբապետի դերին մէջ, իր չէրքէզի հագուստներուն տակ, և Երուանդ Գրիգէսկլեան Պաղտոյի դերին մէջ։ Վսեմ էր հահատակ Պաղտոյի ճակատին յեղափոխականներու կողմէ դրոշմուած համբոյրը։

Երրորդ պատկերը զարիպի «Ուխտաւորն էր։ Հա՞րկ է շեշտել անոր գրական և յեղափոխական եզական արժէքը Ուխտաւորին դերը վերցուցած էր Եդուարդը, որ առջի պատկերին պէս յաջող դուրս եկաւ, իսկ Ոգիին դերը Պ. Տիգրանը, որուն յաջողութիւնը իսկապէս աչքի զարկաւ։

Տպաւորութիւնը շատ խոր էր։

Ժամը ճիշդ կէսին (կէս օրէն ետք) հասարակութիւնը ցրուեցաւ իր հետ տանելով թէ գոհունակութիւն և թէ ցաւ։

Թղթակից

ՍՈՒՉԱՎԱՅԻ ՀԱՅ ԴԱՂՈՒԹԸ

Հետեւեալը պատճէնն է նամակին զոր Պ. Մինաս Զերազ Սուչավայի հայութեան յանձնարարութեամբ եւ անոր անունով ուղղած է Պ. Բրէսանսէի։

Պարոն Երեսփոխան,

Սուչավայի հայութիւնը պաշտօնական գրութեամբ մը, զոր այսօր ստացայ, կը յանձնարարէ ինձի արտայայտել Ձեզ, յանուն նոյն քաղաքին եւ Պուքովինայի նահանգին եւ համայն Աւստրիոյ-Հունգարիոյ հայութեան, իր ջերմագին չնորհակալութիւնները եւ իր ամենախոնարհ երախտագիտութիւնը այն պերճիմաստ եւ նշանաւոր ճառին առթիւ զոր, ամսոյս 9ին, արտասանեցիք Ֆրանսական խորհրդարանին մէջ, ձաղկելու համար դահիճը հազարաւոր հայերուն՝ որոնք այնքան վատաբար խողխողուեցան Սասունի մէջ։

Սուչավայի հայութիւնը կը սերի Բագրատունեաց արքայական հարստութեան մայրաքաղաք եղող Անիի քաղաքացիներէն, որոնք հարկադրուեցան թողուլ իրենց հայրենիքը եւ Եւրոպա ապաստանիլ, ազատելու համար թաթարներու արիւնարբու հալածանքներէն։ Եւ որովհետեւ, այս հալածանքներու յիշատակը դարերու տեւողութեան մէջ, դեռ կենդանի մնացած է հայ գաղութին համար, անիկա ուժեղագոյնս կը ցցցայ իր հայրենիքին ներկայ մարտիրոսութիւնը թուրքերու ձեռքով, որոնք նոյնքան վայրենի մնացած են, որքան իրենց նախահայրը եղող Թաթարները։

Արդ՝ կատարելով հաճելի պաշտօնը զոր Սուչավայի հայոց հոգաբարձութեան մէջ։

ձութիւնը պատիւ ըրած է յայնձնելու ինձի, կը համարձակիմ յուսալ, պարոն Երեսփոխան, թէ պիտի բարեհաճիք չարունակել, աննկուն կորովով մը որ զձեզ կը յատկանշէ, այն ազնիւ ու վեհ հայանպաստ կուիւը որ մարդասէր Ֆրանսայի փառքը կաւելցնէ եւ Արարատի ժողովրդեան պարծանքը կը կազմէ։

Պատիւ ունիմ, պարոն Երեսփոխան, ըլլալ ամենախորին յարգանաք

Ձեզ անձնուէր

Մինաս Չերազ

— —

Պատմէն Պ. Բրէսանսէի հեռագրին

Պարոն,

Շնորհակալ եմ զգացումներուն համար զոր հաճած էք արտայայտել ինձ յանուն Սուչավայի հայ գաղութին հոգաբարձութեան։ Կրնաք վստահեցնել ձեր հայրենակիցները իմ բացարձակ նուիրմանս յօգուտ իրենց դատին եւ ընդդէմ Սուլթանին։

Ընդունեցէք, պարոն, իմ յարգանացս հաւաստիքը։

Ֆրանսիս տը Բրեսանսէ

Երեսփոխան Ռոնի

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՆՈՒՍԱՃՈՒՄԸ

—)o(—

Լոնտոնէն յուլիս 11 թուականով Ն. Ֆ. Պ.-ին կը հեռագրեն։

—«Դէյլի էքսպրէսոր» պէր է Կուրոպատկինի ցարին ղրկած մէկ տեղեկագիրը, որու մէջ Հնդկաստանը նուաճելու մանրամասն ծրագիր մըն է գծուած։ Կուրոպատկինը կ'առաջարկէ երեք չրջաններով առաջ խաղալ։ Ամենէն առաջ 115,000 հոգիով, որոնք երկու բանակներու բաժնուած պիտի ըլլան, Թուրքիստանի միջոցով պիտի առաջանալ եւ առաջին չրջանը պիտի վերջանայ Հերաթի առումով և Աֆղանիստանի հիւսիսային մասի տիրապետումով մինչեւ Բագակսան։ Երկու տարուայ դադարէն յետոյ, որու մէջոցին Աֆղանները կամ հիւսիսորայէս յաղթուած և կամ թուլցած կ'ըլլան, երկրորդ յարձակումը, երկու բանակներու բաժնուած կ'ըլլայ Կանդահարի և Կապուլի վրայ, որմէ յետոյ Պոլանի և Քիպէտի կիրճերով Հնդկաստան կարելի է մտնել։ Որպէս զի այս յառաջխաղացումները ամենայն ապահովութեան մէջ կատարուին և կռնակի կողմէ ըլլալիք յարձակումէ մը վախ չունենան, Կուրոպատկինը կառաջարկէ որքան կարելի է Պարսկաստանի հետ բարեկամարար վարուիլ, որով մինչեւ անգամ կարող է յաջողուիլ ռուսական բանակին յառաջխաղացումը մասամբ ալ պարսկական հողերու միջով կատարելու։ Այս բանի համար պէտք է պարսկական մոլլաները կաշառել, ասոնց միջոցաւ Շահէն իրաւունք ստանալու համար Մէճէտի մէջ աֆղանական սահմանի մօտ ռուսական պաշտօնեայ մը կարգել, որու կոչումը պիտի ըլլայ, Ռուսաստանէն դէպի Մէճէտի ուխտաւորները եկող ուխտաւորները հսկել։ Կրօնական չէյխերը հնչուն ռուբլիներով կաշառելով արեւելեան Պարսկաստանի ցեղերը կարելի է ձեռք առնել, և որմէ յետոյ իրենց երկրի միջով կարելի է առաջ խաղալ։ Կուրոպատկինը իր ծրագիրը կը հիմնէ այն ենթադրութեան վրայ, թէ անգլիացիք իրենց բոլոր ազդեցութիւնը պիտի հնդկաստանցիներու մօտ կորսնցնեն և թէ հոն ապստամբութիւն պիտի ծագի, երբոր ռուսները կապուլ և Կանդահատ հասնին։—

Բնական է, ռուսական անյաղթելի հերոսական բանակը, որ այնքան փառքի դափնիներ ունի, որքան աստղեր կան երկինքը և աւազներ ծովերուն մէջ, ռուսական հանճարեղ հրամանատարները, որոնք Եալուի, Քինչուի, Վաֆանգաուի և Քայփինքի յաջորդական նուաճումով իրենց ռազմագիտութեան և հերոսութեան վրայ բովանդակ աշխարհը հրաւիրեցին հիանալու, վերջապէս ինքը ընդհանուր սպարապետ Կուրոպատկինը, որ իր խոստումը իրականացնելով քանի մը օրէն արդէն Թօքիօ կ'ըլլայ՝ կառապաշտ ու բարբարոս Միքատոին քրիստոնէական սիրով խաղաղութեան պայմանները թելադրելու. բնական է ըսինք, որ աշխարհակալութիւնը առաջ տանելու նորանոր ծրագիրներ մըշակուին տաք տաք, քանի որ հարիւրաւոր յաղթական պատերազմական նաւերը ծովերու ծոցէն և թնդանօթներու անձառները նուաճուած բարձրութիւններէն առիւծներու և յովազներու պէս մոլեգին կը մռնչեն։ Վերջապէս այս աշխարհակալութիւնները բացի ռուսական ըլլալէ, չէ՞ որ համամարդկային են, չէ՞ որ ռուսական տիրապետութիւնը քաղաքակրթութիւն է, որուն ամէ՛ն մարդ, ով ճաբոնցիներու պէս բարբարոս վայրենի չէ՛, պիտի ամբողջ հոգիով ցանկանայ։ Կուրոպատկինի նոր ծրագրի հոգին անգլիացիները Հնդկաստանէն վռնտելն է, անշո՛ւշտ անգլիացիներու նման ազգ մը, որու տիրապետութիւնը ամէ՛ն մէկ մարդկային բարձր զգացումի ջնջումը կը նշանակէ. որ իր բռնակալ վարչութեամբ և ցածհոգի պաշտօնեաներով մահ ու ստրկութիւն կը սփռէ ամէն մէկ քայլին, պիտի վռնտել զանոնք, յանուն արդարութիւն, յանուն ազատութեան և քաղաքակրթութեան։

Բայց կը վախնամ թէ Մանչուրիայի վրայ տեղացող անձրեւներու պատճառով՝ Կուրոպատկինը պաղ առած ըլլայ, և 40 աստիճան տաքութեան մէջ է, որ այդ ծրագիրը կազմած է։

ԱԴԱՄՈՎԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

—)o(—

Ռուսաց «Նովոյէ Վրեմիա» թերթի մէջ կարդում ենք հետեւեալ մանրամասնութիւնները Բագուցի հայ հարուստ վաճառականն և նոյն քաղաքի քաղաքային խորհրդի անդամ Տ. Թ. Ա. Ադամովի սպանութեան մասին, որ տեղի է ունեցել յունիսի 10ին։

«Կէս տարի սորանից առաջ Ա. Ադամովը ստանում է Հայ Յեղ. կոմիտէից մի նամակ 30 հազար ռուբլի պահանջով յօգուտ Թիւրքահայերի գործին։ Ադամովը այս նամակը թողնում է առանց պատասխանի. ինչպէս և դրան հետեւող միւսները։ Այս յունիսի 10ին կոմիտէի անդամները վարվեցին նորա հետ այնպէս՝ ինչպէս վարվեցին Ժամհարեանցի և ուրիշների հետ։ Այդ առաւօտ ժամը 10ին Ադամովը քաղաքային Միքայէլեան պարտիզով զբնում էր իւր գրասենեակը։ Պարտիզում աշխատող բանւորի և մի երեխայի ասելով՝ Ադամովին մօտենում են 3 երիտասարդներ, որոնցից մէկը նոյն իսկ ձեռք է տուել հանգուցեալին։ Թէ ի՞նչ են խօսացել նոքա, յայտնի չէ. միայն բաւական երկար խօսակցութիւնից յետոյ երիտասարդները սկսում են դաշոյներով հարուածներ տալ Ադամովին։ Պարտէզի բանւորը տեսնելով որ գործը լուրջ կերպարանք է ստանում՝ մի փայտով օգնութեան է հասնում հանգուցեալին։ Բայց երիտասարդները ատրճանակով դորան վիրաւորում են. բանւորը ընկնում է, իսկ վախեցած երեխան փախչում։ Երիտասարդները կողքի դռնով դուրս են գալիս պարտիզից նստում կառք և անյայտանում։ Կառքի ետեւից ընկնում է մի ոստիկան, որի վրայ նոյնպէս արձակվում է ատրճանակ և վիրաւորում վերջինիս։ Ադամովին պարտիզից տանում են հիւանդանոց, որտեղ և մեռնում է։

Երեխան ցոյց տուեց թէ գեղեցկադէմ երիտասարդներ էին. ուրիշ նշաններ չէ կարողացել նշմարել, որովհետեւ ահից աչքերը սեւացել են։

Կառապանը ասել է—երեք հոգի դուրս եկան պարտիզից. նստեցին կառքը և պահանջեցին քշել արագութեամբ. երբ ինքը սկսում է բողոքել, նրանցից մէկը ատրճանակը բռնեց գլխին և սպառնում արձակել եթէ չը հնազանդվիմ։

Հասարակութեան մէջ խօսում է, իբր թէ հայ հարուստներից շատերը ստացել են այդպիսի նամակներ և իբր թէ ոմանք կատարել են նոցա պահանջը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Աւստրիական թերթերուն կը հեռագրեն թէ Մակեդոնացիները ուժանակով կամուրջ մը օղը հաներ են և Տէտէ-աղաչի քովը թրէն մը, որուն պատճառով բաւական մարդիկ վնասուեր են։ Բարձրագոյն Դուռը որոշեր է խիստ միջոցներ ձեռք առնել։

— Ռուսական «Նովոյէ Վրէմիա» թերթը կիմանայ թէ Ռուսիոյ և Աւստրիոյ դեսպանները Բ. Դրան պահանջած են որ եւրոպական սպաներու թիւը Մակեդոնիոյ մէջ աւելցուի։

— «Բօլ. Բօրէս.» թերթը Պոլսէն կիմանայ թէ Հայաստանէն եկած մասնաւոր հեռագրի վրայ համաձայն քուրտերը 30 հայր սպաննած են Արճէշի քովերը։

Այդ հայերը Կովկասէն կը վերադառնային նոր։ Քիւրտերը պաններ են նաեւ հայ հարուստ Գրիգոր Բալիօ իր ամբողջ ընտանիքով միասին։

— Յուլիս մէկին Պոլսէն կը հեռագրեն թէ Մակեդոնացիներուն տինամիտային գործերը չաղբեղ տպաւորութիւն գործածեն Եվրոպի մէջ։

ՌՈՒՍ—ՃԱԲՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Ռուսական աղբիւրներէ կիմացուի թէ Ճաբոնացիները յարձակում գործելով Բորթ-Արթուրին վրայ 30,000 մարդի կորուստ ունեցեր են իբր թէ, որովհետեւ ռուսները կրցած են ճաբոն զօրքը հրապուրել մինչեւ ական դրուած տեղերը, ուր և սարսափելի պայթումներ տեղի ունեցերեն։

Այս լուրին չեն հաւատար նոյն իսկ ռուս լուրջ թերթերը։

—«Տէյլ Մէյլ» թերթը յուլիս մէկին Բեթերսպուրկէն կիմանայ թէ հոն կը պնդեն որ Բորթ Արթուրը արդէն ինկած է։

—Ռուս զինուորական գլխաւոր վարչութիւնը կը պարմանայ որ անձրեւները իսկ, որուն վրայ մեծ յոյսեր դրուած էին, չը կրցին արգելք հանդիսանալ ճաբոնական յառաջխաղացումին։

ԱԶԴ

Աղջկանց Կրթարանի քննութիւնները պիտի սկսին յուլիս 5էն, երկուշաբթի եւ պիտի տեւեն մինչեւ 11 կիրակի օր։ Քննութիւնները տեղի պիտի ունենան առաւօտները ժամ 10-12 եւ ցորեկէ վերջ 2-5

Վառնա

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна